

ԱՐՏԱԿ ՄՈՎՍԻՍՅԱՆ


«ՌՈՒՍԱ / ՈՒՐՍԱ» ԱՐՔԱՅԱՆՎԱՆ ԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վանի թագավորության սեպագիր համակարգի վերծանության և ուսումնասիրության առավել խոցելի կողմը մնում է ընթերցումների հնչյունային ճշգրտման խնդիրը¹։ Դա պայմանավորված է բիայնական սեպագրերը Զ.ա. X-IX դարերի ասուրա-րաբելոնյան սեպագրության հնչյունային արժեքներով ընթերցմամբ, ինչը քննադատելի է առնվազն երկու պատճառով։ Նախ, ինչպես ցույց է տալիս Վանի թագավորության կավե սալիկների վերծանությունը, բիայնական արագագիր ոճի մի քանի նշաններ իրենց արխայիկ ձևերով կապվում են հին աքադական (Զ.ու. III հազ.) կամ վերջինից ծագող միտանիական ու խեթական գրության դպրոցներից (Զ.ա. II հազարամյակ), ուստի եզրակացվում է, որ բիայնական արագագիր ոճը պետք է ստեղծված լինի Զ.ա. XIV-XIII դարերից ոչ ուշ²։ Եվ երկրորդ՝ եթե անգամ վերջնական համարենք, որ բիայնական կոթողային ոճը ծագում է Զ.ա. X-IX դարերի ասուրա-րաբելոնյան սեպագրությունից, ապա պետք է չմոռանանք, որ կատարվել է ոչ թե պարզ ընդօրինակում, այլ գրային ընդգրկում բարեփոխում³, ինչի արդյունքում, տրամաբանական է, որ գրային համակարգը հարմարեցվեր տեղի լեզվանյութին։ Օրինակ՝ Հայկական լեռնաշխարհի տեղանուններում առատորեն հանդիպում են «օ» և «վ» հնչյունները, մինչդեռ բիայնական սեպագրում, ըստ այսօրվա ընթերցումների, դրանք բացակայում են՝ հաճախ փոխարինվելով «ու»-ով (բացի այդ, «վ»-ն հանդես է գալիս նաև «բ»-ի տեսքով)։ «Ու»-ն, իբրև առանձին հնչյուն, ունի երկու սեպանշան և հանդես է գալիս նաև բաղաձայնների հետ բազմաթիվ այլ վանկանշաններում. ո՞ր վանկի դեպքում «ու»-ն պետք է կարդալ «օ», ո՞ր դեպքում՝ «վ» կամ «ու», հստակեցված չէ։ Նման օրինակները շատ են. ակներև է, որ պետք է շարունակել Վանի սեպագրության հնչյունային ճշգրտման աշխատանքները։

Հնչյունային ճշգրտման խնդիրն առկա է ոչ միայն բիայնական սեպագրության, այլև Հայկական լեռնաշխարհի մասին այլ սեպագիր աղբյուրներում պահպանված տեղեկությունների ուսումնասիրության

պարագայում: Ներկա հրապարակման մեջ կանդիդատոնանք դրանցից մեկին:

Վաղուց ուշադրություն է դարձվել, որ «Ռուսա / Ուրսա» արքայանունը սկզբնաղբյուրներում ունի ոչ միատեսակ գրություն: Աստիճանաբար աղբյուրներում (բացառությամբ մի դեպքի) այն հանդիպում է «Ուրսա» տարբերակով¹, իսկ Վանի թագավորության սեպագիր արձանագրություններում արքայանունը հանդիպում է «Ռուսա» տարբերակով²: Այսինքն՝ արքայանվան առաջին վանկի գրությունը միանշանակ չէ, ինչից կարելի է եզրակացնել, որ այն ունեցել է այնպիսի հնչողություն, որի հադորդումը որոշակի դժվարություն է ներկայացրել սեպագիր համակարգերի համար:



Նկ. 1. Կարճիկ բլուրի բրոնզե քանդակի ճեկի գրությունը:

Մեպագրով գրված է՝ «Ռուսայի փոքր քաղաքի»:

Մեհենագրով արված է նույն մականությունը՝

«Ռուսայի քաղաք փոքր»



Նկ. 2 Ռուսախինիկի մայրաքաղաքի ճեռատի կմիջմերից ճեկը որի կողքին և հասակին մեհենամշանմ երով գրված է.

«Ռուսա(յի) քաղաք»

Ժամանակին «Ռուսա» արքայանվան համար մասնագիտական գրականության մեջ առաջարկվել են մի քանի մեկնաբանություններ: Նշենք մի քանիսը: Ռ. Այսլերն առաջարկում էր այն մեկնաբանել հունարենով՝ բխեցնելով ΡΟΥΣΑΖ «կարմիր» հիմքից⁶: Գ. Դափանցյանը հակված էր այդ արքայանվան հետ կապել Երվանդական շրջանից հայտնի «Երուագ» անունը⁷ (քրմապետ, Երվանդ արքայի եղբայրը՝ սպանված Զ.ա. 201 թվականին): Վերջին տասնամյակներին առաջ քաշվեց «Հրայյա» անվան հետ քննարկվող արքայանունը նույնացնելու տեսակետը («Ռուշա» կամ «Հռոշա» տեսքով)⁸: Առաջարկվել է արքայանունը բխեցնել հնդեվրոպական *rudhya «կարմիր մետաղ, պղինձ» նախաձևից⁹ և այլն: Որպես օրինաչափություն, բոլոր այդ փորձերն արվել են՝ ելնելով միայն արքայանվան այս կամ այն լեզվի որևէ բառի հետ ունեցած հնչյունային նմանությունից:

Վանի թագավորության մեհենագիր արձանագրությունների վերծանության առաջին արդյունքները քննարկվող արքայանվան գրության և հնարավոր նշանակության մասին մատուցեցին անակնկալ արդյունք: Սի շարք բնագրերում (նկ. 1-2) «Ռուսա / Ուրսա» արքայանունը ներկայացված էր ձիու գլուխ պատկերող գաղափարանշանով¹⁰: Դրանից պետք է եզրակացնել, որ տվյալ արքայանունը նշանակել է «ձի, նժույգ» (սրբազան կենդանիների անուններով մարդկանց անվանակալումը չափազանց տարածված երևույթ է Հին աշխարհում): Դա նաև նշանակում է, որ Վանի տիրակալների մայրենի լեզվում այդ կենդանու անվանումը եղել է երկվանկ, ընդ որում, երկրորդ վանկը եղել է «սա», իսկ առաջինի հիմնային բաղաձայնը՝ «ր / ո»: Այդ անվան որոնումը մեզ տանում է հնդեվրոպական աշխարհ (անգլ. horse «ձի», գերմ. Ross «ձի», անգլ.-սաքս. hros «ձի», պարսկ. res(a) «հասնել», հուն. Ρῶσιον «արշավել, սուրալ», ռուս. рысак «վարգածի», рысать «վարգել»¹¹):

Վերջերս Հ. Հ. Կարազյոզյանն առաջարկեց մի տեսակետ, ըստ որի հին հայերենում ձին պետք է կոչված լինի «(h)որս»՝ համադրելով այն անգլերենի horse «ձի» բառի հետ: Դրա հնարավոր վկայությունն, ըստ հեղինակի, կարելի է համարել Գողթան երգերից հայտնի «Եթե դու յորս հեծցիս յԱգատն ի վեր ի Մասիս...» հատվածը: «Հորս» բառը հեղինակն առաջարկում է քարգմանել «ձի»: Միաժամանակ Հ. Հ. Կարազյոզյանն առաջարկում է մի քանի հայերեն բառեր ևս մեկնաբանել՝ ելնելով առաջարկված հնարավոր բացատրությունից¹²:

Եթե հաստատվի այդ տեսակետը¹³, կարելի է եզրակացնել, որ քննարկվող արքայանունը հնչել է «Հպս(ա)» և նշանակել «ձի, նժույգ»՝ կապված սլացիկ և արևի պաշտամունքին նվիրված սրբազան կենդանու հետ: Հարցի նման լուծումը միանգամայն բացատրելի կարող է դարձնել նաև ասուրական և Վանի թագավորության սեպագիր արձանագրությ-

յունենրում արքայանվան բազմազան գրությունը, ինչն իսկապես կապվում է նշված սեպագիր համակարգերի անկատարության հետ: Դրանցում բացակայում էին «ի» և «օ» հնչյունները, որոնցից առաջինը սովորաբար բաց էր թողնվում կամ հոդորդվում «իս»-ով, իսկ երկրորդը, որպես օրինակափություն, ներկայացվում էր «ու»-ով¹⁴:

Անկախ նշված տեսակետի հաստատումից, մեծ հավանականությամբ կարելի է ասել, որ քննարկվող անունը նշանակել է «ձի, մծույզ» ե կապվել է արևի պաշտամունքի հետ առնչվող, ռազմական գործում առաջնային դեր ունեցող կենդանու հետ¹⁵, ինչում կարող էին արտահայտվել նաև տոտեմական պատկերացումները:

ARTAK MOVSISYAN

ON THE WRITING AND THE POSSIBLE MEANING OF THE KING NAME "RUSA / URSA"

After decipherment of the hieroglyphic writing of Van kingdom (Urartu) it was clear that the king name "Rusa / Ursa" was written by the hieroglyph with the figure of a horse.

According to the H. H. Karagyozyan's new version one of the horse names in oldest Armenian was the word "hors". If it is true, it is very possible that the king name "Rusa / Ursa" had had the meaning of "horse" and the pronunciation of "Horsa".

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. Այդ մասին մասնագիտական գրականության մեջ կան բազմաթիվ նշումներ. տե՛ս, օրինակ, Меликишвили Г. А., Урартские клинообразные надписи, М., 1960, էջ 45:
2. Дьяконов И. М., Урартские письма и документы, Л., 1963, էջ 19-20:
3. Բիայնական գրային քարեփոխման մասին տե՛ս, օրինակ, Աճառյան Հր., Հայոց գրերը, Ե., 1984, էջ 399-406 (հեղինակի բնորոշմամբ՝ այդ քարեփոխման շնորհիվ սեպագրի քարդությունները կրճատվեցին 95 տոկոսով); Меликишвили Г. А., նշվ. աշխ., էջ 33-45:
4. Дьяконов И. М., Ассиро-вавилонские источники по истории Урарту, ВДИ, 1951, N 2-4, NN 46, 49, 50, 76: Ելնելով այն համաձայնեցից, որ բիայնական սեպագրության լեզվում ոչ փոխառյալ բառերը չեն սկսում «ր/ռ» հնչյունով, առաջ է քաշվել տեսակետ, ըստ որի ասորական աղբյուրների «Ուրաս» ձևը համապատասխանում է անվան ճշգրիտ հնչողությանը (Дьяконов И. М., Языки древней Передней Азии, М., 1967, էջ 128; Хачикян М. Л., Хуритский и урартский языки, Е., 1985; էջ 143):

5. Меликишвили Г. А., նշվ. աշխ., էջ 328-334, 341-253; Арутюнян Н. В., Корпус урартских клинообразных надписей, Е., 2001, էջ 289-311, 330-359, 370-374, 375-77:
6. Lehmann-Haupt C. F., Armenien Einst und Jetzt, II-2, Berlin und Leipzig, 1931, էջ 902:
7. Ղափանցյան Գր., Արա Գեղեցիկի պաշտամունքը, Երևան, 1944, էջ 98:
8. Տե՛ս, օրինակ, Իշխանյան Ռ., Պատկերազարդ պատմություն հայոց, գիրք Ա, Երևան, 1990, էջ 75, 91; Հակոբյան Ռ., Հրաչյա՝ որդի Արամի (Արարատյան թագավորության վերջին տարիների ժամանակագրության մասին), «Գարուն», 1992, N 5, էջ 78-81 (Ռ. Բաղալյանը քննարկվող արքայանունը համեմատելով պարթևական «Արշակ» և սանսկրիտի «Ռաջա» անունների հետ՝ ենթադրում է, որ այն կարող էր նշանակել «արքա»):
9. Պետրոսյան Ա., Արամի առասպելը հնդեվրոպական առասպելաբանության համատեքստում և հայոց ազգածագման խնդիրը, Ե., 1997, էջ 100:
10. Սովսիսյան Ա. Ե., Վանի թագավորության (Բիայնիլի, Ուրարտու, Արարատ) մեհենագրությունը, Ե., 1998, էջ 38-40:
11. Նշված բառերի հետ կարող է առնչվել նաև հայերեն «հրոսակ» բառը, որը Հր. Աճառյանը չի ստուգաբանում (Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ. III, Երևան, 1977, էջ 136-137):
12. Կարազոյան Հ. Հ., Սեպագիր տեղանուններ (Այրարատում և հարակից մահանգներում), Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում, հատոր I, գիրք 1, Ե., 1998, էջ 60-62:
13. Այս հարցում վերջնական խոսքը պատկանում է լեզվաբանությանը: Տեսակետը կարելի է վերջնականապես հաստատված ու ընդունելի համարվել, երբ ցույց տրվի, որ հնդեվրոպական մայր լեզվի այն արմատը, որից առաջացել են դուստր լեզուների վերոնշյալ բառերը, մախալեզվից հայերենին անցման արդյունքում կարող է հնչել «(h)որս»:
14. Նշենք, որ մերկայացված տեսակետին հանգելուց հետո փորձեցինք Վանի թագավորության սեպագիր բոլոր արձանագրություններում «ռոս» վանկանշանն ընթերցել «(h)որ» և որևէ հակասություն չգտանք:
15. Չենք բացառում նաև, որ ձիու գլխի պատկերի տակ կարող էր թաքնված լինել ոչ թե հենց «ձի, մծուկ» նշանակող, այլ վերջինիս հետ իմաստով սերտորեն առնչվող որևէ բառ: